

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ՏԵՕՐԷՆ.—ԽՄԱՌԱԳԻՐ

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

49^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 31

29 ՅՈՒԼԻՍ 1900

Մասիս շաբաթաթերթի տարեկան բաժանորդագրիցն է կեն օսմ. ոսկի թե՛ Կ. Պոլսոյ եւ թե՛ գաւառներուն համար, կանխիկ : Արտասահման՝ 12 Ֆրանկ : Վեցամսեայ կամ եւ ռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն :

Մասիս հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխա-
րուն ու Պանչե-Գաբուի ջրավանդաններուն խանութները, ինչպէս նաեւ Ղալա-
յ եւ բոլոր արուարձաններու լրագրավանդաններուն հոյ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՑԷ

درعليه ده غلطه ده «ماسيس» غزنه مى اداره مى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Կ. Պոլիս, Ղալաթիս, Նորասունկեան Խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople





ROSSIA — ROUSSIE

Ա. Պ. Ա. Ն. Վ. Ս. Գ. Ր. Ա. Կ. Ա. Ն. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵՆՆԻՔ, ՓՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիչներ	34,775,642	Փրահք
Երաշխաւորութեան գումար	121,765,333	»
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000	»
Կեդրոնացեալի, Վալարիոյ Գարափին վրայ, Մաւսան հին սեղր		Ընդհ. Գործակալ
Ընդհ. Քննիչ		ԹԷՆՏՈՐ ՌԷՔՔԷՆ
Ա. ՀԻՐՐՄԻԻՉ		

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՊԱՅՊԸԼ ՀԱՌԻԶ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

(ԹԻԻ 27 ՖԵՆՃԱՆՃԸԼԱՐ ԵՕԳՈՒՇՈՒ)

ՄԵԾ ԿԱԶՄԱՏՈՒՆ

ՀԻՄՆԵԱԼ 1853 ԻՆ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Կազմատունը իր ստացած նոր բարեփոխմանը կը ներկայանայ Պաւ. Հրատարակչաց, Գրականաւոց, Թրդքավանաւոց եւ Արգոյ Հասարակութեան իբր առաջին կարգի հաստատութիւն մը՝ հաւասար եւրոպիոյ ամենեւն լաւ կազմատունը : Նորագոյն եւ կասարեւագործեալ շոգեւարժ մեքենաներու յաւելումը՝ գործատուն կարող է, մեր մեջ եղած ամեն ուրիշ կազմատուններէ աւելի՝ շատ եւ աւելի՝ արագ գործ արտադրել, միեւնոյն ժամանակ վստահացունելով իրեն դիմողները թէ՛ Յ. Մատթէոսեանի արտադրութիւնք ԱՄԵՆ ՄՐՅՈՒՄԷ ՎԵՐ ԵՆ թէ ապրանաց լաւութեան եւ թէ աշխատութեան խնամքի կողմէ :

Ասոր լաւագոյն ապացոյցն է երկար տարիներէ ի վեր այս ծան վալելած համբաւը :

Կ'ընդունուին ամեն կարգի յանձնարարութիւնք եւ Պատուարժան յանախորդ վստահ կ'ընան ըլլալ թէ ամենավորք յանձնարարութիւնք իսկ ամենակարեւորին հաւասար՝ նոյն հոգածու խնամքը կը ստանայ :

Գիներու չափաւորութեան մասին պզտիկ փորձով մը համոզուիլը լաւագոյն է :

ՀԱՍՏԱՏՆՈՒԼ 1852

ՏՔՐ Ա. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ-ԱՏԱՄՆԱԲՈՅԺԻՔ

396 ՄԵԾ ՓՈՂՈՑ ԲԵՐԱ 396

(Յանձնի գարեջրատան վրայի յարկը, նիւթ Զրպուհեանց դէմը)

Կատարեւագործեալ գործիքներու միջոցաւ ամենաստատիկ ցաւած աղաները մեկ անգամէն կը լեցնեն : ցաւով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ :

Նորահար եղանակաւ, նուրբ, ճաշակաւոր եւ դիմացկուն արհեստական աղաներ կը պատրաստեն, յար եւ նման բնականի, դեմքի ձեւաւորութիւն ըստ տարիքի, ծանոթութիւն եւ ազատ արտաւարութիւն երաշխաւորուած :

Բերնի հիւանդութիւնք կատարեւագրէ կը բուժուին ինչպէս նաեւ թմրեցուցիչ դեղերու եւ ամենակատարեւագործեալ աքցաններու միջոցաւ, առանց ցաւի ատամնահանութիւն :

Յ. Գ. Զմեռները կիրակի օրերն ալ (միւսինքն կ'ես օր) ինչպէս նաեւ ամէն օր (միւսինքն կ'ես գիշեր) հիւանդ կ'ընդունին :

Մանօք. — Պոլսոյ կողմը մասնաճիւղ ԶՈՒՆԻՆՔ :

ՄԱՍԻՆ

49^{րդ} ՏԱՐԻ


— 29 ՅՈՒԼԻՍ 1900 —

ԹԻԻ 31

ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹԻՒՆ

Ումպերթ քաղաւորը և Մարգարիտա քաղաւորին — Սեր-աղջկը (Բախտսեղծութիւն) ՍՏՓ. ԳՍՐԳՈՒԹԼԵԱՆ, — Եգնիկի գերմաներէն քարգմանութիւնը (Ղերշնքան) ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԳՈՒՐԵԱՆ, — Մասիսի հարցարանին շուրջը Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ, — Կեա-Բժշկական. Արեւահարութիւն. ՏՈՒԹ. ՅՈՒՄ Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ, — Մանուկներու քաժիկը. Եվո և Քրիստինէ. (Աւանդակայ) ԱՆՏԵՐՍԸՆ:

ՈՒՄՊԵՐԹՈ ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԹԱԳՈՒՅԻՆ



Կարելի չէ նկարագրել այն վիշտի ահագին արտայայտութիւնը որ այսօր պարզուած է բովանդակ Իտալիոյ մէջ, Ումպերթօ Ա. թա. գաւորին մահուան պատճառաւ: Սուգը տարածուած է ամբողջ երկին վրայ, մայրաքաղաքէն սկսեալ մինչեւ ամենայեպիս գիւղակը, եւ չկայ կ'ըսեն տուն մը ուր քանի մը կաթիլ արցունք թափած չըլլան ընդհանուրէն սիրուած այդ վեհապետին համար: Խանութները գոցուած ամէն տեղ, զրօսանքներուն վերջ տրուած, թատրոններն ու զբօսավայրերը դոյ, հանդէպները յետաձգուած, եւ բոլոր առոնց փոխարէն աղօթք ամէն տեղ: Իտալիա քիչ անգամ այսքան հանդիսաւոր երեւոյթ մըն էր տեսած, իր գերազանցապէս ոգեւորուող ժողովուրդը՝ որուն պատմութիւնը անվերջանալի պայքարներու եւ կռիւներու շարք մըն է, որչա՛ր խորապէս ցատած պէտք է ըլլայ՝ այսչա՛ր շուռ ու հանդարտ արտա. յայտութեան մը մէջ փնտռելու համար իր վշտին ամոքումը:

Այդ մահուան վրայ նոր բան մը չկայ գրելիք, քանի որ տեղական լրագրիւնները օրին հրատարակեցին հասած տեղեկութիւնները: Հետաքրքրականը այս պահուս նոյն իսկ անհատական կեանքն է Ումպերթօ թա.

գաւորին, մանրամէտքերով ընցուն կեանք մը որ այնչափ սիրուած էր Իտալիայէն, եւ անհաճիչդ այդ կեանքն է՝ զոր իր սրտը մատերուն մէջ պիտի պատկերացնենք հոս, հիմնուելով այն անձնական յիշատակներուն վրայ՝ զորս հանգուցեալ թագաւորին հետ յարարերու թիւն ունեցող անձեր ու հրապարակագիրներ հրատարակեցին այս վերջին օրերս, երրօղական մամուլին մէջ:

Սէրը զոր Իտալիոյ ժողովուրդը կը տածէր իր վեհապետին նկատմամբ, շատ հին բան մը չէ. վահագաւանգ եղած պահուն Ումպերթօ Ա. գրեթէ անծանօթ մնացած էր ժողովուրդին՝ որ շատ քիչ առիթներու մէջ կը տեսնէր զինքը: 1866ին յիշայն, Քիւսթի թոժծոյի պատերազմի դաշտին վրայ զինուորական շատ փայլուն գործողութեամբ մը յայտնուեցաւ, եւ այդ օրէն սկսեալ Իտալացիք սկսան սիրել զինքը իրր քաջ զինուոր մը նախ, եւ յետոյ՝ երբ Վիքթոր Էմանուէլ Բ. մեռաւ, իր բարի վեհապետ մը: Այդ Քիւսթի թոժծոյի պատերազմը իրօք ամէնէն գեղեցիկ էջերէն մէկն է Իտալիոյ պատմութեան — Աւստրիացիք յանկարծակիի բերած էին Իտալացիները եւ ամբողջ բանակ մը վտանգի մէջ

էր . աւատրօ-հունգար ձիաւորները կատաղի յարձակումի մը մէջ կը փորձէին առաջըր կտորել չփոթած բանակին՝ որ նահանջին մէջ սալա- ուած էր փնտռել իր փրկութիւնը : Այդ յար- ձակումը կատեցնել պէտք էր : Ումպէրթօ՝ որ Բիէմոնթական զօրաբաժին մը ունէր իր հրա- մանատարութեան տակ , խսկոյն առաջ նետ- ուեցաւ , եւ իր զինուորները քառակուսիներու բաժնել տալով . դէմ՝ դրաւ աւատրօ-հունգար հեծեալազօրքին առաջին յարձակման . բայց թշնամին յամառ էր . երկրորդ եւ ա՛լ աւելի զօրաւոր յարձակում մը , յետոյ երրորդ մը , իրարու հետեւեցան , ահարկու բաղխումով մը առաջ բերելով մէկը այն պատերազմի չփոթ վիճակներէն՝ ուրիշ ընդհանուր խառ- նուրդ մը միայն կը յատկուի , եւ ուր ո՛չ յաղթողը կարելի է որոշել , ոչ ալ յաղթուողը : Բայց Բիէմոնթացիք ամուր մնացած էին ի- րենց դիրքերուն մէջ , եւ երրորդ յարձակու- մէն ետքը քառակուսիները չէին լուծուած , շնորհիւ Ումպէրթոյի ջանքերուն որ ամէն անգ- կ'երթար , ամէն անգ կը վազէր՝ յորդորելով զինուորները որ կուրին յամառօրէն եւ չտկա- րացնեն զիմադրութիւնը : Այդ յամառութեան առջեւ է որ երրորդէն ետքը Աւատրիացիք չորրորդ յարձակում մը ընելէ զգուշացան . նկատելով մանաւանդ թէ առաջին երեք յար- ձակումներուն միջոցին կուրի դաշտին վրայ թողած էին իրենց մեծագոյն մասը : Անդին , խառնական բանակը կրցած էր նահանջելու ժամանակ գտնել , եւ հասած էր Վէրօնա , վտանգէ բոլորովին գերծ :

Ումպէրթոյի ժողովրդականութիւնը այդ օրէն սկսաւ , եւ Իտալիա ամէնէն լաւ գաղա- փարներէն մէկը կազմեց իր գահաժառանգին զինուորական կարողութեանը վրայ : Իսկ երբ աւելի ետքը գահուն վրայ բարձրացաւ , այդ ժողովրդականութիւնը շեշտուեցաւ այն գե- րազանցապէս գեղեցիկ ու բարի գործերով , զորս չապլեց իր ժողովրդին : Հարիւրաւոր օրինակներ կը յիշուին , որոնցմէ քանի մը հատը մէջ կը բերենք . — երկրաշարժ մը կոր- ծանած էր Իշիան եւ Փազամիչիօլան : Թա- դաւորը անմիջապէս Իշիա կղզին գնաց , եւ ինք անձամբ դարմանեց վիրաւորները , մի- եւնոյն ատեն կարօտեալներուն բաժնելով

դրամ , հաց , վրան , որպէս զի անոնցմէ ոչ ոք յուսահատի աղէտքին մեծութեան հան- դէպ : Աւելի ետքը , երբ ահաւելի քոչրա մը ծագեցաւ Նաբօլիի մէջ , միեւնոյն անձնուր- րութիւնն ու ժողովրդասիրութիւնը ցոյց տուաւ Ումպէրթօ , դիւցազնութեան մասին միջեւով Սան-Ֆէլիչէ կարդինալին հետ՝ որ ամէնէն օ- րինակելի ընթացքը ունեցաւ այդ առթիւ : Թագաւորը , յորդորելով ժողովուրդը որ հա- մաճարակին դէմ կուրի առանց յուսահատե- լու , ինք անձամբ օրինակը կու տար , երթա- լով Խիտին ամէնէն սաստկացած վայրերը , խնամելով հիւանդները , ուրիշներու անձնա- սիրութիւնը գրգռելով , եւ առաջ բերե- լով գործելու ընդհանուր մղում մը՝ որ բժշկական դարմաններէ աւելի նպաստեց համաճարակին առաջըր առնելու համար : Թագաւորին այս գեղեցիկ ընթացքին վրայ , անգոյն վարչութիւնը ոսկի միտալ մը տուաւ իրեն , որուն համար Ումպէրթօ կ'ըսէր թէ կրած պատուանշաններուն մէջ ամէնէն աւելի ա՛ն է որ հպարտ կ'ընէ զինքը : 1862ին՝ կարգ մը միջոցներու ներկայ գտնուելու համար հրաւիրուեցաւ Նաբօլի՝ որ այդ առթիւ սքան չելի հանդէսներ սարքուած էին : Բայց ճիշտ այն պահուն՝ երբ կը պատրաստուէր ճամբայ ելլելու , լսեց որ Ափիճէ գետը յորդելով ո- ղողեր է ամբողջ քաղաք մը՝ Վէրօնան : Ան ատեն , խսկոյն դադրեցուց մեկնումի պատ- րաստութիւնները եւ առանց ժամանակ կոր- սընցնելու դէպի հոն ուղղուեցաւ ըսելով .

— Նաբօլի ուրախութեամբ ողորդած է , իսկ Վէրօնայի մէջ մարդիկ կը մեռնին : Վէ- րօնա կ'երթամ :

Այս բարձր գործերն են որ զինքը այն- չա՛յի սիրցուցին ու ժողովրդականացուցին ո՛չ միայն Իտալիոյ մէջ , հապա՛նուեւ բոլոր այն երկրները՝ որոնց այցելութիւն տուած է այլ եւ այլ առիթներով :

* *

Ումպէրթոյի մահը արահովարար ամէնէն աւելի վիշտ եւ յուսահատութիւն առթեց կնոջ մը : Իրեն պէս բարի , իրեն պէս անձնուէր , շնորհալի եւ ընդհանուրէն սիրուած կնոջ մը , Մարգարիտա Թագուհիին՝ որ ամէնէն լաւ կը

ճանշնար զինքը, եւ ամէնէն աղէկ թափանցած էր իր հոգիին: Կը նկարագրեն թէ թագաւորին ո՛չ թէ մահուան, հապա նոյն իսկ հիւանդ բլլալուն լուրը զինքը զլիսէ հաներ է բոլորովին: Խեղայեղօրէն նետուեր է առաջ, երթալ ինք իր ձեռքով դարմանելու համար անգուցական ամուսին մը՝ որուն սակայն անշնչացած դիակը տեսեր է մահուան անկողին վրայ: Ու կ'երեւակայէք անշուշտ այն սրտաճկիկ տեսարանը որ պարզուած է մեռելական սենեակին մէջ. թագուհին ջղածգօրէն գրկած է ամուսինը, որ ա՛լ բան մը չէր կրնար զգալ այն տաք համբոյրներէն՝ որոնք իր գէմքին վրայ կը տեղային: Ու չորսդէն վազեմի պաշտօնատարներ, նախարարներ, արքայական ընտանիքէն անդամներ, ազգականներ որոնք ամէնէն ցաւագին լացերէն մէկը կուլան այդ սիրտ բզբտող տեսարանին հանդէպ, որ կրկնուած է նոր թագաւորին Մոնձա գացած օրն ալ:

Մարգարիտա թագուհին լաւագոյն աշխատակից մը եղած է իր ամուսնին համար: Նշանաւոր գեղեցկութեան տէր, ընդելուզուած այնչա՛փ հմայիչ շնորհալիութեամբ մը, խօսուն, գրաւիչ եւ իր ամուսնին պէս բարի, ամէնէն լաւ տալաւորութիւններէն մէկը թողած է իր երկրին ժողովրդեան վրայ, որ պարզապէս խենթ կ'ըլլայ անոր համար: Բարի մայրն է անիկա աղքատներուն, խորհրդատու մը հարուստներուն, պաշտպան գեղարուեստին եւ բոլոր գեղեցիկ բաներուն, ու այդ հանգամանքներով իսկ պաշտուած ամէնէն: Սքանչելի կրթութիւն մը ստացած է, գիտէ՝ քանի մը լեզու, եւ անխտիր կը հետաքրքրուի բոլոր այն յղացումներուն զորս արուեստի այլ եւ այլ ճիւղերը կ'ունենան: Օրուան լաւ հրատարակութիւն մը զինքը նոյնչափ կը շահագրգռէ՝ որչափ պիտի շահագրգռէր լաւագոյն թատերախաղը: Եւ այսպէս, միշտ միեւնոյն սէրը երաժշտութեան, նկարչութեան ու վերջապէս բոլոր այն բաներուն համար՝ որոնք մարդուս հոգին կը զուարթացնեն:

Ու զարմանալին հոն է որ Ունպէրթօ ատենց բոլորովին հակառակ հակումներ, նախափրութիւններ ցոյց տուած է սկիզբէն

ի վեր: Ոչ թատրոնը կրցած է զինքը շահագրգռել, ոչ երաժշտութիւնը, ոչ նկարչութիւնը եւ ոչ ալ ուրիշ ո եւ է նմանօրինակ բան մը:

Կը պատմեն թէ, ձէնովայի դուքսին ամուսնութեան ատթիւ, չափազանց դժգոհ խլացուցիչ նուագահարութենէ մը, թագաւորը ծերակուտականի մը կը մօտենայ ու կը հարցնէ.

— Ի՛նչպէս, զուարճացա՞ք:

Ծերակուտականը՝ որ թագաւորին նախասիրութիւնները գիտէր,

— Օ՛հ, վեհափառ տէր, կը պատասխանէ, ինչպէս կ'ուզէիք որ զուարճանայի:

— Բաղդաւոր էք, կ'աւելցնէ Ունպէրթօ, քանի որ դուք գոնէ կրնաք ձեր կարծիքը յայտնել, մինչդեռ ես, նեղուելուս հակառակ, պիտի ստիպուիմ հիմա շնորհակալութիւն յայտնելու:

Անգամ մըն ալ, Նարոյի մէջ, թագաւորը երկարօրէն պտտցուցած էին նկարչական ցուցահանդէսի մը մէկ սրահէն միւսը: Ունպէրթօ առանց բնաւ զգացած դժգոհութիւնը յայտնելու, համբերութեամբ մտիկ կ'ընէ բոլոր այն մանրամասն բացատրութիւնները զորս ախսեօնիները կը փութային տալ իրեն: Բայց միւս կողմէ ալ կը խորհի վրէժը լուծել, եւ անոնց վերջանալէն տնմիջապէս ետքը կ'ըսէ՝ կատարեալ անտարբերութեամբ:

— Յուշահանդէսին գոցուելէն ետքը ինչի՞ պիտի կրնան ծառայել բոլոր այս նկարները:

Կ'երեւակայէք անշուշտ թէ ի՛նչ քիթ բերան ըրած են մարդիկը:

Ուրիշ անգամ մը, Փրանսացի նշանաւոր հրապարակագիր մը, Տիկին Ատան՝ որ Իտալիոյ մէջ ճամբորդելուն ատթիւ թագաւորին ներկայացուած էր, կը փութայ անոր բացատրել այն բովանդակ բանաստեղծութիւնը զոր իր այցելած տեղերուն վրայ գտած էր, ու մասնաւոր հիացումով մը կը նկարագրէ կարգ մը անմշակ տարածութիւններ, հիանալիօրէն պճնուած բնութեան շնորհներով:

— Արդարեւ, կը պատասխանէ Ունպէրթօ, բոլոր այդ տարածութիւնները ընդելուզուած են բանաստեղծութեամբ: Բայց ես անոնց մէջ պիտի նախընտրէի տեսնել նուազ բանաստեղ-

ծութիւն եւ . . . աւելի գետնախնձոր :

Արքունիքին համար բարեբաղդութիւնը հոն էր որ թագաւորին թողած այդ պակասը լիովին կը լեցնէր Մարգարիտա թագուհին, որ կրնայ իտալիոյ Գառմէն Սիլվան համարուիլ եթէ ոչ գրական արտադրութեան տեսակետով, գոնէ գեղարուեստներու մասին իր ցոյց տուած պաշտպանութեան համար: Բոլոր պաշտօնական ընդունելութեանց, արքայական պարահանդէսներուն, կաշալի ներկայացումներուն ինքն էր որ լիայլ կուտար ու կը մոռցնէր թագաւորին թողած պակասը: Վերջին ծայր խնամք կը տանէր որ ամէն բան կոկիկ ըլլայ իր շուրջը, ամէն բան զմայլելի սիրուն ու գրաւիչ:

Մարգարիտա թագուհին — հիմայ մայր թագուհի — տեսակցութիւնը իր գաւկին՝ Վիքթոր Էմմանուէլ Գ. ի ու հարսին՝ Էլէնա թագուհին հետ, շատ սրտայոյզ եղած է: Մոնձայի մէջ, երբ առաջին անգամ՝ սեղան պիտի նստէր արքայական գերզաստանը, Մարգարիտա թագուհին՝ սրուն վերապահուած էր մինչեւ այն ատեն պատուոյ տեղը՝ իր հարսին ձեռքէն բռնելով, հրաւիրեց որ սյուսհետեւ ինք բազմի այդ տեղը: Թագաւորն ու թագուհին, որոնց աչքերը լեցուած էին, խնդրեցին որ ինք պահէ միշտ պատուոյ տեղը, եւ Էլէնա թագուհին իր ամուսինն քովը նստաւ: Ճաշը սուգի ճաշ մը եղաւ, կարճ ու անխօսուի:

ԵԶՆԻԿԻ ԳԵՐՄԱՆՆԵՐԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

—>—<—

Վերապատուելի Հ. Գրիգորիս Վ. Գալէմքեարեան իր վերջին պատասխանովը (Մա. սխ. թիւ 30) կ'ուզէ փակել «եզնիկի գերմաներէն թարգմանութեան» առթիւ իր ու իմ միջեւ յարուցուած վիճարանութիւնը, բաւական համարելով «երկիողմանի շնորհուած ունկնդրութիւնը»:

Նիւթին ծանօթ կէտերուն վրայ արդէն գրուածները կը մնան ի հրապարակի. մենք եւս չենք փափագիր ամուլ պայքար մը մղելու, քանի որ Հ. Գալէմքեարեան մեր յօդուածներու մասին պէտք զգացած է յայտարարելու թէ «Տակաւին բան մը չհանցանք» եւ չհեղու ալ յոյս չունինք», եւ միւս կողմանէ՝ մեզի յարմարելով (!) dahineilen՝ բայը սուրաջ թարգմանելուն համար անգամ չաւ գլղացած կ'երեւի, անշուշտ հետեւանքէն դժգոհ մնալով:

Ըստ Հ. Գալէմքեարեանի, մեր պաշարն անբաւական կը սեպուի. պատրաստ ենք եւ մենք հաճութեամբ խոստովանիլ զայն, — միայն թէ բառարաններէ փոխադրուած վկայութիւնները մեծ պաշար մը չնկատուին սխալմամբ —, բայց չենք զիտեր որ մեր յօժարա-

միտ յանձնառութիւնը Հ. Գալէմքեարեանի տկարութիւններուն ո՛ր աստիճան դարման մը պիտի կրնայ ընձեռել:

Մեր գրածներէն բան մը չախած չե եղեր Հ. Գալէմքեարեան: Բայց մենք պիտի համարձակինք ըսել թէ թերեւս բան մը պիտի չահէր, եթէ «երե գազան» ի կամ «երազագան» չի մտացածին բացատրութիւններէն ու ձեռքն հրաժարէր:

Թերեւս բան մը պիտի չահէր, եթէ պայի «կէս մարդ» լլլալը գիտնալով՝ միւս կէտին համար ալ մեր ըսածին գէթ հաւանէր. վասն զի այն ատեն պայը պիտի չը շիտէր «Շահապետ վայրաց» կոչուած ոգիին հետ (475ա) որ «մերթ մարդ երեւէր եւ մերթ օձ» (եզնիկ): — Հոս փակագիծ մը բանանք: Հ. Գալէմքեարեան պայ բառին համար լեզուագիտութեն ցոյց կու տայ արմատ մը՝ որ կը հետանայ մեր նշանակածէն, ու բան մը հաստատելու շճառայեր, իրրեւ ստուգաբանական փորձ մը՝ սրուն շատ տեսակները կրնան զտնուիլ: Մենք միայն կը զարմանանք թէ ի՞նչ պէս Հ. Գալէմքեարեան՝ հին արիական բաներու համեմատութեամբ վճիռ արձակած ա-

տեն՝ չհասկնար ձեռք յունարէն բառին կիրառութիւնը, ու կը հարցնէ (անշուշտ ո՛չ մեզի, որովհետեւ յոյս մը չունի մեզիէ բան մը չահելու, այլ ինքնիրեն) «Ի՞նչ կ'ուզուի արդեօք հասկնել սա ձեռք բառով՝ որ խոշորովի կը նշանակէ»։ Կ'երեւի թէ Հ. Գալէմբարեան աճապարանքի տակ բառարանի դիմելով ձեռք բառին հանդիպած է։ «Απὸ εἰς einmal=une fois, զոր Եւրոպացի բանասէրներ կը գործածեն, ո՛ր եւ է մատենագրութեան մէջ մէկ անգամ միայն հանդիպուած բառերու համար (որոնք անյայտ կամ կասկածելի ալ կրնան համարուիլ)։ Արդէն մէկէ աւելի ձեռքներ դոյութիւն ունին մեր մատենագրութեան մէջ, որոնցմէ ոմանք եզնիկով հասած են, եւ մէկ երկու հատ ալ Հ. Գալէմբարեան կը փորձէ աւելցնել ճրիարար։

Թերեւս բան մը պիտի շահէր Վեր յօդուածագիրը, եթէ ըստ կամս վիշապներու քերականը դրած խօսքերուն մեկնութիւն մը ջանար տալ, ինչպէս առարձակած էինք եւ կը սպասէինք ըսել. բայց ինքը բուն կարեւոր կէտը մէկդի թողլով՝ ուրիշ ամենապարզ կտորի մը կը կառչի, նախ՝ մի քիչ գրարար հասկցողի վկայութեան ապաւինելով, եւ ան. միջապէս յետոյ՝ (չենք գիտեր ինչո՞ւ)՝ կարո. դագոյն մէկէ մը ըլլուելիք «մտքի մօտ եւ հաւանականագոյն» մեկնութեան պէտքն զգալով (!)։

Թերեւս բան մը պիտի շահէր Հ. Գալէմբարեան՝ եթէ Վահրամ Վ.ի քանի մը նշա-

նաւոր տողերը՝ որոնց վրայ դեռ նոր մտադրութիւն դարձուցած կ'երեւի՝ համեմատութեան դնէր եզնիկի յիշած օղը բարձրացող վիշապին հետ (քանի որ Վահրամ Վ. իր առջեւն ունի եզնիկը (476ա)։

Նոյն Վահրամի ուրիշ քանի մը «չատ հետաքրքրական» մասերն ալ վերի վերոյ աչքէ անցընելով՝ Հ. Գալէմբարեան աւովին երեւակայութիւնը ըկող վիշապ, դեռ, քաջ կոչուած սգիներու համար «միեւնոյն բանն են» ըսելու չէր. վասն զի ալ ի՞նչ դժուարութիւն կը մնար նկանգ, յուշկապարիկ, առիթ, պայ, շահապէս վաշրաց եւայլն յորջորջուած ամէն ոգիներն ալ ըստ բախտի նոյնացնելու (ինչպէս նոյնացուցած էր Հ. Գալէմբարեան վերջի երկուքը)՝ եզնիկի Démonologieին աւելորդ մեծարանք մը մատուցած ըլլալու համար։ Իրա՛ւ է որ՝ բուն նշանակելի կէտը Վահրամ Վ.ի խօսքերուն մէջ՝ վիշապներու եւ քաջերու ընծայուած շահատակութեանց պարագաներուն նմանութիւնն է, բայց մեզի կ'երեւի թէ ի վիճի լերան Մնացողին կեանքի զրոյցը՝ որ վիշապագուններով կը սկսի եւ քաջերով կը վերջանայ՝ յեանագոյն դարերու մէջ վիշապներու եւ քաջերու դերերն իրարու հետ շփոթելու առիթ տուած ըլլայ, մանաւանդ այդ մասնաշերտը յատուկ արհամարհանքով մը տարամերժող քրիստոնէայ միտքերու մէջ։

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

23 Յուլիս 1900, Արմաշ


Նպաստից Յանձնաժողովի երեքշաբթի օրուան նիստին մէջ՝ Ս. Պատրիարք Հայրը՝ գլխավոր Պ. Գրիգոր Զանգեանցի մահը, մանրամասնաբար բացատրեց բարեկիշատակ հունգուցելոյն 1897 թուականէն ի վեր 7500 ոսկիի մօտ գումար մը Պատրիարքարանի տրամադրութեան ներքեւ դրած ըլլալը։ Ուրիշ թէ՛ կարօտեւոց հացագին բաշխուած է եւ թէ՛ 12 օրրանոցներ բացուած ու մատակարարուած են մինչեւ այսօր։ Յանձնաժողովը դադրեցուց իր նիստը ի յորգանս հանգուցելոյն յիշատակին, որպէսզի որ հոգեհանգստեան յատուկ պաշտօն կատարուի։

Վանայ այցելու հոգիւ Տ. Ներսէս եպիսկ. Ապունեան հեռագրած է Պատրիարքարան թէ ճամբայ ելած է Պոլիս գալու համար։

Պ. Կարապէտ Գալթայեան, որուն բեմական կարողութեանը վրայ թեր ու գէ՛մ այնքան թղթակցութիւններ հրատարակուեցան անոնք մը տեղական ազգ. թերթերուն մէջ, Բարիզէն մայրաքաղաքս եկած է եւ թատերական ներկայացում մը պիտի կազմակերպէ, կ'ըսուի։

Սպանդարեան վարժարանը, Գառնգիւղի մէջ, իր տարեկան հանդէսը կատարեց անցեալ կիրակի, ընծայելով չորս շրջանաւարտ օրիորդներ։

ՍԷՐ-ԱՂԶԻԿԸ



Ինչո՞ւ ինձի թափառի,
Սորվեցուցին քու աչքերդ,
Ա՛խ, ինչո՞ւ ինձ թափառի,
Սորվեցուցին քու աչքերդ:

* * *

Հիմայ եղայ թափառյա՞ծ,
— Սիրոյ հեք քընաշրջիկ —
Ու մնջելով միշտ, Աստուած...
Կ'երբամ ճամբքն ես մենիկ:

Հոսի արիւնը սրտիս,
— Ցաւին նուիրուած չոր կանթեղ —
Դողամ, կարծես հոգիիս
Մեջ դղրդի ժած մ'անեղ:

Սեր-աղջիկն է որ իրեն
Կը կանչէ զիս երգելով,
Երգով մը որ խորերէն
Կուգայ սուրբ ու հոգեթով:

«Հեւքոտ, անուշ ու տխուր,
«Ես մեծ երգն եմ դարերուն,
«Իմ բառերուս խորքն ու հուր,
«Կ'ընեն տիեզերքը բըթուն:

«Ոջ Գաւարան, ոջ Եղեմ;
«Իմըս՝ տաճարն է Կեանքին,
«Եկան օրօր քեզ երգեմ,
«Իուն ալ իմ զոհերէս մին:

«Արեւէն խունկ եմ շինած,
«Ու իմ բոցերս ծանօթ չեն.
«Մատղաշ քու լանջքդ ինձի բնց,
«Երջանկութիւնն հոն վառեմ:»

* * *

Ու խորանի մը առջև,
Տաճարին մէջ, մութ կայան,
Զո՞ն մ'ալ ես որ հեղինէ,
Պիտի այրիմ յաւիտեան:

ՍՏՓ. ԳԱՐՐՈՒԹԼԵԱՆ



“ՄԱՍԻՄԻ” ՀԱՐՑԱՐԱՆԻՆ ՇՈՒՐՁԸ

Մասիսի խորագրութեան ներողամիտ հրաւերը առիթ կու տայ ինծի՝ պարզելու քանի մը համոզումներ, անկեղծ, թէեւ ոմանց համար ճշգրտութենէ զուրկ կէտեր ալ նշմարուին անոնց մէջ:

Ա. — Հեթանոսական ժամանակներու գրականութիւնը, եթէ ունէինք, մեզի հասած չէ. անոր համար չենք կարող որչ կարծիք մը կազմել հինին նկատմամբ: Ոսկեդարէն մինչեւ հիմա ինչ որ եկած է մեզի, երբեք «գրաւոր ցոլացումն ու յիշատակարանը չէ՝ մեր ցեղին կեանքի երեւոյթներուն»: Հայ միտքը արտադրած է երբայական գրականութեան հզօր ազդեւորման ներքեւ. նոյն իսկ Նաւրեկացին Աստուածաշունչի մարգարէներու մէկ արձագանգը եղած է, իր գործին խառնելով ողբի խորունկ ու արհաւիրացի շնչով մը — որ մէկ ցեղի յատուկ չէ՝, այլ ընդհանուր մարդկութեան կը պատկանի: Աւելի պարզելով, հայ միտքը մինչեւ հիմա չէ՝ արտադրած գրական գործ մը, որ դարագլուխ մը բանայ եւ կամ՝ կարենայ բազդատութեան գրուիլ մարդկային հին եւ նոր դասական գործերուն հետ: Հետեւեալ ու միջակ եղած ենք, այս՝ անուրանալի է: Բայց անժխտելի ալ է թէ զարգացումի անհրաժեշտ պայմաններու բացարձակ չգոյութիւնը, անցեալին մէջ, առիթ տուած է այդ միջակութեան: Այնպէս որ «ճշմարտագէտ հայ գրականութիւն մը չենք կրնար արտադրել» բռնաւ չափ յուեաւ չեմ: Ատիկա պայմաններէն կախում ունի:

Բ. — Երկրորդ հարցումին պատասխանը պարզապէս ժխտական է: Այսօրուան ալ, երէկուան ալ թրքահայ գրականութիւնը երբեք չի համապատասխաներ անարկուած պայմաններով հայ գրականութեան: Վերը գրականութիւն բառին ընդարձակ ու ճշգրիտ սահման մը տուած էք, բայց այդ սահմանը այնչափ լայն է որ այսօրուան մեր ունեցածը՝ այդ գրականութեան ստուերն անգամ չէ՝ կարելի համարիլ: Պոյն՝ զոր թրքահայերու

մտաւորական կեանքին իր կեդրոն կ'ընդունիք, մինչեւ հիմա թերթերու մէջ՝ օրը օրին միայն կեանք ունեցող յօդուածներով՝ ճանացած է լեզուն մաքրելու, կազմակերպելու: Պոլսեցի գրողը երկար տարիներ դրաբարի աշխարհարարի վէճերով զբաղած է, ու մինչեւ հիմա չեմ ճանչնար հեղինակութիւն մը որ գլուխ-գործոց մը արտադրելով, վճառական ձեւ մը տուած ըլլայ աշխարհարարին: Պարզ է ուրեմն թէ Պոլսահայ գրողը մինչեւ հիմա լեզուով զբաղած է, ձեր բմբռնած գրականութեան հիմը դնելէն առաջ «իր բովանդակ ընդարձակութեանն ու կատարելութեանը մէջ»: Բայց թէ ընդունակ կրնա՞յ ըլլալ այդ գրականութիւնը երեւան բերելու: Արդեօք Պ. Յարութիւնեան կը կարծէ թէ Պոլսահայ գրողը օտար գրականութեանց ազդեցութեամբ այնչափ խմբուած է, որ չի կրնար զուտ առհմայինը արտադրելու ընդունակ ըլլալ: Պատասխանը վերջի կը թողունք:

Գ. — Կը կարծէ՞ք որ օրուան Պոլսահայ թրքահայ գրականութիւնը պէտք ունենայ նոր ձգտումով մը ներշնչուելու: Քանի որ Պ. Յարութիւնեան գրականութիւնն անունը շատ չի սեպեր մեր այսօրուան ունեցածին, բան մը զոր ես նախափորձեմ իսկ անուանելու կը քաջուիմ՝ բազդատելով օտարինին հետ, կը պատասխանեմ թէ պէ՛տք է այդ գրական ձգտումը, նախ օրպէս զի ճանչնանք մեր մտաւորական մակարդակը ու երկրորդ օրպէս զի կամաց՝ այլ յարատեւ աշխատութեամբ կարենանք հիմնարկել զուտ հայ գրականութիւնը:

Դ. — Այս հարցումը դառն ծիծաղով մը կը կարդամ: «Գաւառական գրականութեան առաւելալուծութիւնը Պոլսականին վրայ» չհասկցայ՝ չիտակը: Գրականութիւն մը ունինք արդէն որ զայն երկու բաժանումի վերածենք ու ելլենք բազդատել զանոնք իրարու հետ: Այսօրուան Պոլսեցի գրողներէն շատեր՝ երէկուան գաւառացիներն են ու փոքրիկ համարիլ: Պոյն՝ զոր թրքահայերու

կան կամ գաւառական գրականութիւն բառերով : Եւ միայն մէկ գրականութիւն կը ճանչնամ, զուտ տոհմայինը, որուն հիմնուելուն հաւասարապէս պարտին աշխատիլ : Պոյսահայն ու գաւառացին : Օտար գրականութեանց ազդեցութեամբ թէ՛ Պոլսեցի, թէ՛ գաւառացի գրողին վիժած փորձերը այսօր կամ վաղը պիտի իյնան ժամանակի մոռացման զամբիւղին մէջ : Անոնք մեզի չեն սլատ կանիր : Գրականութեան զնչունները ամէն բան կրնան ըլլալ զուտ հայ գրագէտներ ըլլալէ զատ : Ու եթէ կը հաճի, կրնայ ցոյց տալ Պ. Յարութիւնեան գաւառի հեռաւոր անկիւն մը ուր արդէն հասած չըլլայ օտար գրականութեանց ազդեցութիւնը :

Գրագէտը իր շուրջի ժողովուրդին անցեալն ու ներկան ուսումնասիրելու եւ անոր ինքնատիպ յատկութիւնները խուզարկելու է — եթէ մնացած են տակաւին, — որպէս զի կարենայ ցեղին կեանքովը լեցուն գործեր

արտադրելու : Ու գաւառը ճանչցողը շատ լաւ գիտէ արդէն թէ հոն բնակիլը նոր ներշնչումներով պիտի չճխտացնէ վաղուան գրականութիւնը : Աւեր ժողովուրդը արդէն երբեք տեղ մը ինքնատիպ մնացած չէ : Զայն չըջապատող տարրերը իրենց գոյնը ու շատ անգամ ալ իրենց լեզուն տուած են անոր : Պոլիս, կամ գաւառը, վաղուան գրականութեան աշխատանքը իր կեանքը պիտի նուիրէ քեկոյններ հաւաքելու, տարրական նիւթեր, թէեւ շատ դժուարութիւններով, որպէս զի մեզի յաջորդող ուրիշ սերունդներ կարենան զանոնք գրականութեան մէջ հալեցնել :

Ամփոփելով գաղափարներս, կ'եղբակացընեմ թէ գրական ուժերու բաժանում չենք ընդունիր : Պոլսահայ կամ գաւառական անունով գրականութիւն չենք ճանչնար : Առաջնորդը՝ Տաղա՛նդն է, ըլլա՛յ Պոլիս, ըլլա՛յ գաւառը :

Իգմիր

Ռ. ՈՐԵՐԵՐԱՆ

Կ Է Ս — Բ Ժ Շ Կ Ա Ա Ա Ն

Ա Ր Ե Ի Ա Հ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Աշխարհիս այլեւայլ կողմերէն եկած լուրեր կը հաստատեն թէ անպովոր տաք մը կայ այս ամիսներուս : Եւրոպական եւ Ամերիկեան կարգ մը մեծ քաղաքներու մէջ՝ հարիւրաւորներ հիւանդացած են չափազանց տաքէն, եւ բաւական թուով անձեր եւս մեռած են յանկարծապէս կամ խիստ կարճատեւ ախտանիշերով : Բարեբաղդարար մեր կողմերու տաքը այդ աստիճան չէ՛ բարձրացած որ մահացու անուանենք, բայց ամէնքս ալ կ'ընդունինք կարծեմ թէ անտանկիլ էր սա՛ յուլիոս տաքը, մայրաքաղաքին ինչպէս նաեւ մօտակայ գաւառներու մէջ :

Մենք սովորական մահկանացուներս գիտենք թէ ամառը տաք կ'ըլլայ, եւ երբ նոյն իսկ լացառապէս տաք ըլլայ ամառուան սա՛ կամ նա՛ ամիսը՝ եղանակի տաքն է ըսելով

կ'անցնինք : Բայց գիտունները, որոնք գիտեն թէ ամէն արդիւնքի պատճառ մը կայ՝ գոհ չեն մնար տասնեկ հասարակ-տեղի պատասխանէ եւ միշտ կը հետամտին գտնել լաւնաւոր կամ գոհացուցիչ պատճառը ո՛ր եւ է՝ բներեւոյթի : Եւ այդ կարգի գիտուններէն մէկը՝ Արրայ Մորէօ՝ վերջերս գտեր է թէ անցածները մեր զգացած չափազանց տաքին պատճառն էր արեգակին վրայ գտնուած բիծերէն մէկուն մեր երկրին դէմ գալը : Այս Արբան տասներկու տարիէ ի վեր հրաշալի համբերութեամբ կը քննէ կը զննէ եղբարեգակին վրայ տեսնուած բիծերը, ուստի չպիտի զարմանաք երբ ըսեմ թէ այդ գիտունը այնքան լաւ կը ճանչնայ մեզմէ սաչափ միլիոն միլոն հեռու գտնուող գունաւոր երեսին վրայ գլուխուած բիծերը՝ ինչքան մենք թերեւս չենք

ճանչնար մեր դիմացինին երեսին վրայ երեւցող բիծերը : Եւ փակագիծի մէջ ըսեմ թէ, բիծ ըսելով աննշան կէտ մը հասկնալու չենք, հապա 25,000 մըն տրամագիծ ունեցող տա. րածութիւն մը, զոր տեսեր ու չափեր է վե. րոյիշեալ գիտունը՝ Բարիզի համալսաւոյ հե. ռադիտակին մէջէն : Ու մինչ մենք հոս մեզ տապիւղ տաքին, դէմ կը գանգատէինք՝ ան. դին Արբան մեծ գիւտ. մը ըրած ըլլալու ան. հուն հրճուանքը, կը վայելէր, համոզուելով միանգամայն թէ արեգակնային բիծերը կը ներկայացնեն այդ հրեղէն գունտին է՛ն տաք մասերը : Ուստի մեզի կը մնայ միայն մաշ. թել որ այդ բիծերը ստէպ ստէպ դէմ առ դէմ չի գան գէթ մեր գտնուած գեղին կամ քա. ղաքին, ու երթան ծածկեն գիտնական Ար. բային հեռադիտակին սկաւառակը :

Յ Անցնինք հիմա Արեւահարութեան : Ա. րեւէն զարնուած կամ տաքէն տկարացած անձ մը նախ կ'ունենայ, հետեւեալ նշանները, — գլխի պոռոյտ եւ ցաւ, քնարեր թմրութիւն, սիրտ-խառնուք, մարոցք, որոնց կրնայ վերջնապէս յաջորդել կատարեալ թալուկ կամ նուաղում, եթէ բժշկական միջամտութեան չի դիմուի ատենին : Արեւազարկի այս աստի. ճանին մէջ դարմանումը միշտ յաջող ելք մը կ'ունենայ բարեբաղդաբար :

Երբ մարմնին բաց մասերը, ինչպէս դէմքը եւ ձեռքերը՝ արեգակին կիզիչ ճառագայթնե. րուն ենթարկուած են ուղղակի, այդ մասե. րուն մօրթը գրգռուած վիճակ մը կը ստա. նայ, կը շառագունի, եւ այրուածքի նման փշոթիկներ կը տեսնուին : Այս ալ սակայն լոկ տեղական դժուարութիւն մը կը հանէ, եւ դիւրաւ կրնայ դարմանուիլ սովորական դե. զերով :

Մեր կլիմային տակ տեսնուած արեւահա. րութեան դէպքերը մինչեւ հոս յիշուած ար. տանիչները միայն կը ցուցնեն սովորաբար : Կան սակայն արեւազարկի պարագաներ, ուր սաստիկ ջերմութիւնը կ'ազդէ ուղղակի եւ ան. միջապէս՝ արեան շրջանին եւ ջրային կեդրոն. ներուն վրայ, ճիշդ կաթուածի նման : Կրնայ ըլլալ, օրինակի համար, որ հով չի բանող նկուղի մը կամ բաց արտի մը մէջ աշխատող անձ մը յանկարծ բռնուի գլխի սաստիկ ցաւէ,

եւ գետինը փռուի անկենդան : Աս կարգի շատ մը դէպքեր արդէն պատահեր են վեր. ջերս Եւրոպական եւ Ամերիկեան քանի մը մեծ քաղաքներու փողոցներուն մէջ, ուր շն. քերուն բարձրութիւնը եւ ճամբաներուն նե. ղութիւնը անշարժութեան կը մատնեն քաղ. քին տաք օդը :

Արեւազարկի մէկ մահացու տեսակը յիշ. ուած է նմանապէս «Չարորդ Գիրք»ի չոր. րորդ գլխին մէջ Սունամացի կնկան տղուն պատմութեամբը. — «Եւ տղան մեծցաւ, ու մէկ օր մը իր հօրը գնաց հնձողներուն քովը : Եւ իր հօրը ըսաւ. գլուխս, գլուխս, ան ալ մանչուն ըսաւ. ասիկայ իր մօրը տաք : Ու զանիկա վերցուց ու անոր մօրը տարաւ. եւ անիկա մինչեւ կէս օր անոր ծունկերուն վրայ նստաւ ու մեռաւ» : Տարակոյս չկայ բնաւ թէ այս պատմութեան մէջ յիշուած տղան ողջ աւոզը դաշտ գացած էր հնձողներուն քով, եւ խօկոյն բռնուած էր գլխի սաստիկ ցաւէ մը եւ հազիւ կրցած էր ըսել «գլուխս, գլուխս» եւ քիչ վերջը մեռնիլ : Արեգակին ջերմութեւն առագայթները տղուն գլուխը այնքան տաք. ցուցած էին որ հոն արեան անսովոր համա. խառնում մը եւ անոր յաջորդող բորբոքում մը առաջ բերին, ինչ որ հիմա շատ սրտ ճանչ. ցուած հիւանդութիւն մըն է բժիշկներուն հա. մար : Այս տեսակ յանկարծակիւ եւ անտա. նելի գլխի ցաւեր ատանկ պարագաներու տակ կրնան միշտ անհաճոյ հետեւանք ունենալ. մանաւանդ որ վերի պատմութիւնը պարու. նակող գլխին վերջի համարներուն մէջ յիշ. ուած դարմանը նոյնքան յաջողութեամբ գոր. ծադրելու համար Եզրոէ մը անհրաժեշտ է :

Արեւահարութիւնը ուրեմն սեպելու ենք բաւական սովորական բան մը՝ ներկայ տա. քերուն, մանաւանդ անոնց համար որ իրենց գործին բերմունքովն ստիպուած են երկար ատեն ենթարկուիլ բաց արեգակին տաքու. թեանը, կամ փակուիլ նեղ ու հեղձուցիչ խոր. շերտ կամ խցիկներու մէջ : Որչապէս հասկը. նալու ենք թէ չուքին մէջ ալ չափազանց տաքը՝ արեւազարկի նման փորձանքներ կը բերէ մարդուս գլխուն, ինչպէս կրկին եւ կրկին ապացուցուած է շոգեհաւներու խորերն աշխատող հնոցապաններու օրինակներով :

§ Սպասելով որ գիտունները օրին մէկը հիմնական դարմաններ գտնեն, դառնանք գործադրելի դիւրին միջոցներուն վրայ խօսելու :

Նախ եւ առաջ պէտք է որ մեր հագած հազուստները թեթեւ ու բարակ ըլլան : Գիտեմ մայրեր , որոնք իրենց զաւկներուն վրայ չափազանց դուրգուրաւով խաւ խաւ լաթերով կը պատատեն իրենց փոքրիկները , որպէս զի պաղ չառնեն , հարուստ չըլլան : Եւ խեղճ տղաքը մէկ կողմէն օգին տաքութենէն , միւս կողմէն՝ իրենց վրայ բեռցուած հազուստներուն թանձրութենէն պարզապէս կը տապա-կուին , կը մարմիրն : Ու տղան նորէն հարբուստ կ'ըլլայ հակառակ մայրական այս տա-րապայման հոգատարութեան :

Դարձեալ , ամառը , կարելի եղածին չափ բաց գոյն կամ լաւ եւս ճերմակ հանդերձեղէն հագնելու է , բնագիտական սա ծանօթ պատճառով որ սպիտակ մարմինները սեւերէն քիչ իրենց կը քաշեն , կը ծծեն արեգակին ճառագայթները : Մեր հագած լաթերն ալ կարելի եղածին չափ թոյլ թող ըլլան , մա-նաւանդ իկներ աղէկ կ'ընեն որ հրաժարին , գէթ սա տաքերուն , անիծեալ սեղմիրանէն , այլովքն հանդերձ :

Հազուստէն ետքը հոգ տարուելու է ու-տելիքին : Մսային եւ մանաւանդ ճարպային կերակուրները քիչ ուտելու է : Ընտելունը արդէն այս միջոցին ամէն ատենէ աւելի ճօխ է պտուղներով եւ ընդեղէններով . աստեղծ ուտելու է տարրեր տարրեր ձեւերու տակ : Թարմ պտուղը մանաւանդ կերէ՛ք ուղածնուդ չափ , բաւական է որ տհաւր զանազանէք հասունէն : Ամառուան հիւանդութիւններուն չափը՝ պտուղներու անզգոյշ գործածութենէն առաջ կու գայ . խալի սաւոր , տհաս տանձ՝ հիւանդութեան կարապետներն են չափ ան-գամ :

Պաղ ըմպելիները օգտակար են՝ եթէ չա-փաւոր գործածուին . բայց տաքին դէմ կրու-ուելու համար անյագօրէն պաղ ջուր կամ ո՛ր եւ է ըմպելի խմելը սովորաբար փափագուա-ծէն չափ տարրեր արդիւնք կ'արտադրէ . խմե-

լու ենք ծարաւը անցընելու համար , եւ ո՛չ թէ պաղչիւլու համար , քանզի ասի անկարելի է ձեռք բերել մարսողական խողովակը սա-ռեցընելով իսկ : Շարունակ պաղպաղակ ու-տելու սովորութիւնն ալ վնասակար է . ատով բնաւ չէք կրնար զովանալ , ընդհակառակը աւելի կը նեղուիք :

Իսկ ոգելից ըմպելիները մի՛ գործածէք բնաւ . . . եթէ կրնաք : Ատոնք մարմինը կը տաքցնեն , կ'այրեն , հոգ չէ թէ մեզեղով խմէք օգին կամ ջուրով : Լոնտոնի մէջ ան-ցածները հաշիւ մը բրեր եւ տեսեր են թէ արեւազարկէ յանկարծապէս մեռնողներն ա-մէնքն ալ զովանալու համար ոգելից ըմպելի-ներու դիմողներ էին , եթէ մարդ կ'ուզէ ան-պատճառ ջուրէն տարրեր հեղուկ մը գործա-ծել՝ աւասիկ կաթը , որ միանգամայն սննդա-բար ըլլալու առաւելութիւնն ալ ունի իր մէջ :

Վերջին թելադրութիւն մը եւս . երբ օդը շատ տաք ու նեղիչ է , կրնաք օրուան ո՛ր եւ է պահուն պաղ ջուրով լոգանք մը ընել . ծովը մտէք եթէ մօտերնիդ է . իսկ տաշտը՝ որ ամէն տուն կը գտնուի՝ շատ պատշաճու-թեամբ կրնայ ծովին տեղը բռնել , թէեւ բը-լայ նուազ բանաստեղծական :

Պաղ ջուրի մէջ թաթխուած սպունգով կամ խաւշուով մարմինը աղէկ մը թրջել ու սրբել թէ՛ օգտակար է եւ թէ ո՛ր եւ է տան համար դիւրին ու գործնական : Արդիւնքն ալ մա-նաւանդ շատ հաճելի է . ամբողջ մարմնովդ կը զգաս զօրութիւն մը , որուն հեշտիւ կը յա-ջորդէ՝ քունը , եթէ թող տաս : Եւրոպայի վաճառատուներէ ոմանց մէջ զրազիրներն արտօնուած են ուղած ատեննին երթալ որոշ-ուած սենեակ մը , եւ հոն կատարել սպիտա-յին արարողութիւնը : Ինծի կու գայ թէ զո-վանալու այս եղանակը ամէն տեղ կրնայ ընդհանրանալ առանց անպատեհութեան :

Աւելի կրնայի երկարել դարմաններու այս ցանկը . բայց կը զգուշանամ , քանզի գլխու ցաւ պատճառող ընթերցումներ ալ կրնան պատճառել խնդրի նիւթ եղող նեղութիւնը :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԲԱԺԻՆԸ

ԱՆՏԵՐԱԸՆ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԵՐԷՆ ՆՄՈՅՇ ՄԸ

Օտար գրագէտի մը, Անտէրսընի, մէկ վէպը կամ աւելի ճիշդը՝ հեկաքը (conte) կը ներկայացնենք այսօր մեր ընթերցողներուն, Մալուկներու քաժիմը վերնագրին տակ, վասն զի ինչօ եւ Քրիսթիանէն — այս է վէպին անունը — թէեւ ամէն հասակի ընթերցողներէ ախորժ հետաքրքրութեամբ մը կրնայ կարդացուիլ, ինչպէս եղած է Եւրոպայի մէջ, բայց մասնաւորապէս մանուկներու կեանքին կը վերաբերի։ Այս նախախորժով չենք կրնար անշուշտ զոհացում տալ՝ օրաթերթերու մէջ երբեմնակի երեւցած յօդուածներով, ինչպէս նաեւ խմբագրութեանս ուղղուած նամակներով յայտնուած այն փափագին, թէ մեծապէս օգտակար կրնան դառնալ մանուկներուն նուիրուած քանի մը էջեր, զրական, զիտական ու բանաստեղծական գրութեանց մէջտեղ։ Այս զոհացումը պիտի ջանանք տալ հետզհետէ մեր ընթերցողներուն որոնց մեծագոյն մասը ծնողները կը կազմեն։ Առ այժմ Թարգմանութեամբ մը կը սկսինք։ Անօգուտ չենք համարիր հակիրճ ժամանակին մը տալ նախ ինչօ եւ Քրիսթիանէի հեղինակին վրայ։

Հանս Քրիսթիան Անտէրսըն ծնած է 1805ին, Օտէնսէ, Տանըմարքայի Ֆրիսիա կղզիին մէջ։ Հայրը աղքատ կոշկակար մըն էր որ երիտասարդ մեռաւ։ Անտէրսըն՝ 12 տարեկան հասակին մէջ որբ մնացած եւ իր ապրուստը ինք հոգալու հարկին տակ, Քոբէնհակ գնաց բաղդ փնտելու, իր բազուկներէն եւ ուշիմութենէն զատ ուրիշ ոչինչ ունենալով հետը. հոն՝ աշխատելով հանդերձ՝ կրթութիւն ալ ստացաւ։ Հետզհետէ ամբարեց հիմնական ժամանակները, եւ կրցաւ մտնել վարժարան մը ուր լատիներէն սորվեցաւ։ Անտէրսըն շատ կանուխէն հակում մը զգաց իր մէջ դէպ ի գրականութիւն։ Իր առաջին հեղինակութիւնները՝ Ոգելֆաթ տղան, Հեսիոսն ճաւաղադաշխան դէպ ի Արմա՝ լոյս տեսան 1828ին, եւ ասոնց յաջորդեցին երգիծական պատմութիւն մը եւ վօտվիլ մը։ Առաջին փորձով երիտասարդ գրագէտը մեծ յաջողութիւն ձեռք բերաւ, որուն շնորհիւ 1831ին ուղեւորութիւն մը կատարեց դէպ ի Գերմանիա եւ հոն համբաւաւոր մատենագիրներու հետ բարեկամութիւն հաստատեց։ 1833ին այցելեց Բարիզ, յետոյ Զուիցերիա ուր աւարտեց Ալմէս Թատերգութիւնը։ Այնուհետեւ ժամանակ մը Հոտ հաստատուեցաւ ուր սկսաւ իր մէկ վէպը, L'improvisateur, զոր Տանըմարքա դարձին աւարտեց։ 1840ին երկրորդ ճամբորդութիւն մը ըրաւ Իտալիա։ Շնորհիւ պաշտօնական հոգածութեան ու տարեկան թոշակի մը զոր Տանըմարքեան կառավարութիւնը յատկացուց իրեն, Անտէրսըն իրականացուց իր երազը՝ որ էր միմիայն իր գրական աշխատութեանց տալ ինքզինքը, իր ուղեւորական տպաւորութիւնները ամփոփեց «Բանաստեղծի մը վաճառանոցը» անուն հատորի մը մէջ։

Իր հայրենիքը վերադառնալուն, հրատարակեց առաջին հատորը իր հէքեամներուն (contes) որոնք մեծ հռչակ հանեցին, հակառակ Էօլէնշլէկէրի կծու քննադատութեանց. Էօլէնշլէկէր տղայական կը համարէր գրական այս սեռը որ սակայն Անտէրսընի արտադրութեանց լաւագոյն մասը կազմեց, իր ամբողջ գործերը հրատարակուած են 23 հատորներով։ Անտէրսըն մեռած է 1875 օգոստոս 6ին, Քոբէնհակի մէջ։

Անտէրսընի վէպերը կամ վիպակները, բացի Տանըմարքայէ, Ֆրանսայի, Գերմանիոյ ու Անգլիոյ մէջ ալ գրական լուրջ ուսումնասիրութեանց առարկայ եղած են։ Ասոնք ամէնքն ալ կը համաձայնին սա կէտին վրայ թէ Անտէրսընի գլխաւոր արժանիքը եղած է ամէն մարդու կարդացընել առեւտրութեամբ միմիայն տոյց ահմանուած գիրքեր, — ինչ որ պատուական՝ այլ միանգամայն յանդուգն գաղափար մըն էր։ Յաջողութեամբ ձեռք գտնելէ ետքը գրական բոլոր մեծ սեռերուն, Անտէրսըն իր առջեւ բացաւ ամէն դուռ եւ ամէն սիրտ, խօսելով անոնց որ ընտանեկան յարկին էն սիրելիներն են, Նախ մանուկները, յետոյ մայրերն ու հայրերն ալ ականջ դրին անոր պատմութիւններուն։ Խոստովանեցան որ ատոնք հրապուրիչ բան մը ունէին եւ անոնց իւրաքանչիւրին մէջ կար տրեւու անորջ ճառագայթ մը որ հոգին կը տարցնէ։ Անտէրսըն գտաւ, երեւան, հանեց մանուկը, ինք առաջինը եղած է այդ յեղյեղուկ մատաղ միտքերը յանկուցանող, առաջինը որ խօսած է անոնց համար շինուած լեզու մը, հասկնալի եւ հաճելի ամէնուն ալ, ինքը ոչ միայն գիտցաւ թէ ինչպէս պէտք է հիւսել մանկական պատմութիւն մը եւ ինչպէս պէտք է կապել անոր զանազան մասերը, այլեւ ուրիշ որ եւէէ հեղինակէ աւելի կրցաւ գտնել այն յաջող բացատրութիւնները որոնք ունկնդիրներու վրայ համակիր տպաւորութիւն մը կ'ընեն։ Իր պատմութիւններուն մէջ կան որ միամիտ ձեւի մը տակ ունին բարոյականի այն մեծ դասերուն հոգին զորս կը վերագրենք ամէնէն նշանաւոր փիլիսոփաներուն։ Անոնք օրինակի համար Մօր մը պատմութիւնը որուն հայերէն գողտրիկ թարգմանութիւնը տարիներ առաջ այնքան հանդիմանով կարդացուեցաւ տեղական թերթի մը մէջ. առեւնք ֓ոռիտիկ համալսարան, հոգեյոյզ այդ հէքեամը, որուն իւրաքանչիւր էջէն բանաստեղծութիւն կը հոսի. ուսումնասիրենք՝ մերթ անորջ ու մերթ կսկծագին միջադէպները այն պզտիկ գլուխ-գործոցին որուն անունն է.

իոյ եւ Քրիստոսի։ Այս պատկերներուն մէջ պիտի գտնենք յօրինուածքի եւ ոճի անանկ յատկութիւններ որոնք հան-
ճարներու յատուկ են, ինչ որ կ'ապացուցանէ արդէն՝ Անգլիոյ, Գերմանիոյ եւ բովանդակ Հիւսիսի մէջ անոնց ժողովը-
դական դարձած ըլլալը։

ԻՎՕ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻՆԷ

Ա.

Եռթլանտը ուռցող ջինջ ու խաղաղ գե-
տակին՝ Կուտէնայի մօտիկ, Սիլքսօրկի ան-
տառին ծայրը՝ կը գտնուի գետնի տարածու-
թիւն մը՝ որ երկու կողմէն շեղակի վեր կը
բարձրանայ պատուարի մը պէս, եւ որուն
Ասաէն անունը կուտան։ Գիւղական պզտիկ
տուն մը կը տեսնուի հոն, չըջապատուած
հերկելի բայց ամուլ հողով։ Յանցառ հաճա-
րին ու գարիին մէջտեղ աւազուտ հողը աչքի
կը զարնէ։

Ասիկէ շատ տարիներ առաջ հոն բնակող
բարի մարդիկ իրենց՝ ձեռքով կը մշակէին
պզտիկ արտերնին։ Շիտակը բսելով՝ երեք
ոչխար, մէկ խոզ ու երկու եզ միայն ունէին.
բայց այսչափն ալ կը բաւէր իրենց, վասն զի
քիչով շատանալ գիտէին։ Կրնային թէ եւ
զոյգ մըն ալ ձի աւելցնել անոնց վրայ, բայց
շատերուն պէս ասոնք ալ «Ձին չահածը
կ'ուռէ» կ'ըսէին ու ետ կը կենային։

Եէր, Եէնա — այս էր գիւղացիին անունը—
ամառն արտերը կ'աշխատէր, ձմեռն ալ տունը
փայտմուճակներ կը շինէր։ Ձեռքը չուտ էր
ու ճարտար. բայց գործը պակաս չ'ըլլալուն՝
օգնական մը բռնած էր որ իրեն չափ աղէկ
կը հասկնար արհեստէն։ Գիւղացիները՝ այր
թէ կ'ին՝ անոր շինել կուտային իրենց մուճակ-
ները, որոնք մօտակայ Ռանտէրս քաղաքին
մէջ գնուածներէն աւելի փայլ ու տոկունու-
թիւն ունէին։ Կը շինէր նաեւ շերեփներ
որոնք լաւ գնով կը ծախուէին։ Դրամը պա-
կաս եղած չունէր եւ Եէր Եէնա դիւրակեցիկ
մարդ մը կը համարուէր։

Միակ զաւակ մը ունէր, պզտիկ Իվօն,
որ նոր եօթը տարեկան կ'ըլլար այս պատմու-
թեան սկսած ատենը։ Իվօ սիրայօժար աշ-
խատանոցը կը մտնէր ու ձեռքերը գրպաննե-
րուն մէջ ուղադիր աչքերով մերթ հօրը քով
կ'երթար եւ մերթ աչիւրտին ու անոնց եր-
կուքին ալ աշխատութիւնը կը դիտէր հետա-

քըրքուրեամբ։ Երբեմն ինքն ալ անոնց պէս
ընել կը փորձէր. կը կտրէր փայտի կտոր մը,
մատներն ալ մէկտեղ կտրելով, բայց ամե-
նեւին չէր լար երբ քիչ մը արիւն վազէր։
Օր մը ինքն իրեն երկու պզտիկ աղւուր փայտ-
մուճակներ շինեց, զորս կ'ուզէր ընծայ տալ
պզտիկ Քրիստինէին։

Քրիստինէ նաւավարին աղջիկն էր։ Շատ
փափուկ ու շատ սիրուն էր ան եւ միշտ այն-
քան վայելուչ հագուած, որ զանի հարուստի
աղջիկ կը կարծէին։ Մէկուն մօքէն չէր անց-
ներ որ տափաստանին վրայ՝ կիզահոգէ խըր-
ճիթի մը մէջ կը բնակէր ան։ Իր հայրը այրի
էր եւ փայտահատներուն անտառին մէջ կը տ-
րած վառելավայրերն իր նաւակովը քաղաք
փոխադրելով ապրուստը կը ճարէր։ Քրիստի-
նէին վրայ հսկելու համար մէկը չունենալուն,
զանի հետը կ'առնէր նաւակին մէջ. եւ կամ
եթէ անտառ երթալու ըլլար, կը թողուր որ
ծաղիկներ քաղէ իր քովն ի վեր։ Իսկ երբ
մինչեւ Ռանտէրս կամ մինչեւ Սիլքսօրկ եր-
թար, զանի տափաստանին միւս կողմը՝ Եէր
Եէնաի տունը կը ձգէր։

Քրիստինէ որ Իվօն տարու մը պզտիկ էր,
անոր ընկերուհին եղած էր այսպէս։ Երկու
պզտիկները միասին կը զբօսնուէին, հացերնին
ու խաղերնին անբաժան, վազելով, ցատկե-
լով, աւային մէջ ծակեր բանալով, ամէն
տեղ մագցելով եւ մուճակագործին տանը
չուրջը անդադար երթալ գալով։ Օր մը մին-
չեւ իսկ փորձեցին բարձրաւանդակին զատի-
վերէն վեր ելլել ու քաջարտութեամբ մօտն
միւս մինակ անտառին մէջ։ Հոն կոտորի հաւ-
կիթներ գտան եւ ասիկա իրենց համար մեծ
ուրախութիւն մը ու դիպումը մը եղաւ որուն
վրայ երկար ատեն խօսեցան։

Իվօ երբեք տափաստանին միւս ծայրը
գացած ու մինչեւ Կուտէնա նաւարկած չէր։
Երեւակայեցէք ուրեմն իր անհուն բերկրու-
թիւնը երբ աւտու մը նաւավարն ըսաւ անոր

թէ զինքը Քրիստոնէի հետ միասին պիտի առնէ տանի, ցոյց տալու համար գետակն ու երկիրը, երկու մանուկները նաւակին մէջ ճիւղերու խորձին վրայ նստան եւ զուարճալի էր տեսնել զանոնք աչքերնին խաւոր խաւոր բացած՝ իրենց հացն ու քաղած պտուղները՝ լափելով ակործով, Նաւավարն ու իր ընկերը նաւակը առաջ կը քշէին իրենց ճանկաւոր ձողերով, եւ հոսանքին ուժովը արագութեամբ կը սահէին կ'անցնէին այն լըճակներէն զորս կը ձեւացնէ գետակը՝ չոջապատուած ուռիներէ եւ ծառատունկերէ որոնք ջուրին մէջ կը ցոլային իրարու քով ա'յնքան մօտ որ կարելի չէր իրենց ոտտախիտ ծածկոյթէն անդին տեսնել: Լուսաւոր ցանցառուտներ ալ կային սակայն ա'յն տեղուանքն ուր հինաւորց բարձր ծառեր՝ հարկւրամեաներու պէս կորաքամակ՝ հեղուկ հայելիին վրայ կը ծռէին, մինչդեռ բազմադարեան կաղնիներ կը տարածէին իրենց կեղեւազուրկ ոստերը իբր թէ թեւերնին սթթած ըլլային ցոյց տալու համար իրենց մերկ ու վարակիտ բազուկները: Քիչ մը անդին լաստենիներ՝ ինկած կործանած հոսանքին ուժէն — որ գետեզերքն ուտելով ուտելով երեւան հանած էր անոնց արմատները —, իրենց երկայնութեամբ կը պառկէին թափանցիկ հայելիին վրայ եւ հեռուէն կը դռեակներու կը նմանէին:

Կային նաեւ թրաշուշաններ որ պչրանքով կը ձօճէին, լայնատերեւ հարքնամատեր որ կը լողային խաղաղիկ, եւ քանի որ նաւակը կը յառաջանար, ալեակներուն ծփծփանքը կը կարկաչէր շատախօս ծփանդներու պէս: Ո՛հ, հեշտալի ճամբորդութիւն մըն էր աս: Վերջապէս հասան այն փակոցին առջեւ ուր օձաձուկեր կ'որսուէին եւ ուր ջուրը՝ սահանքին կիսարաց դուռներէն անցած ատեն կը գահավիժէր եռալով, փրփրալով, շառաչելով: Ի՞նչ եւ Քրիստոնէ կը սքանչանային: Այսքան աղուոր տեսարան մը տեսած չէին երբեք:

Այն ժամանակ այն տեղ ո՛չ գործարան կար, ո՛չ գիւղ եւ ոչ ալ բնակարան: Հոն կը տեսնուէր միայն վաղեմի սահանքը որ ահագին ուժով կը շարժէր, եւ քանի մը հոգի պէտք էր զայն գոցելու բանալու համար: Զուրին անկումն ու վարի բաղերուն աղա-

ղակները միակ աղմուկներն էին որ բնութեան լուսթիւնը կը խռովէին:

Փայտերը նաւակէն պարպելէ յետոյ՝ նաւավարը կողով մը լեցուն օձաձուկ եւ նոր մորթուած խոճկոր մը գնեց, զորս նաւակին մէջ դրին ու ետ դարձան հոսանքն ի վեր ելելով:

Հովը նպաստաւոր էր. առագաստները հեղիկ հեղիկ կ'ուռնային. կարծես թէ գետափին վրայ երկու հուժկու ձիեր կային որ նաւակը կը քաշէին:

Այսպէս անտառէն անցան եւ երբ հասան այն տեղը ուր սովորաբար օգնականը նաւակէն ելլելով կ'երթար իր տունը որ շատ հեռու չէր անկէ, նաւավարն ալ անոր հետ ցամաք ելաւ: Նաւակը գետեզերքին կապեցին չուանով. Քրիստոնէին հայրը մանուկներուն պատուիրեց հանդարտ կենալ. ու իրենք ելան գացին:

Բայց Ի՞նչ եւ Քրիստոնէ հետաքրքիր էին, կ'ուզէին կողովին մէջ եղածը տեսնել, օձաձուկերը մատներնուն մէջտեղ սահեցնել եւ պզտիկ խոճկորին պոչը քաշել կամ աչքերը բանալ: Աւելի մօտէն դիտելու համար Քրիստինէ ծունկերուն վրայ առաւ զայն. բայց կողովը հաւատարակութիւնը կորսնցնելով, աղլկան ձեռքէն սահեցաւ ինկաւ ջուրին մէջ: Հոսանքը քնց տարաւ զայն, եւ այս՝ ծանրակշիռ դէպք մը եղաւ իրենց համար:

Ի՞նչ երկիրով պաշարուած՝ ցամաք ցատկեց ու սկսաւ փախչիլ: Քրիստոնէ ալ անոր ետեւէն:

— Զի՛ս ալ հետդ տար, կը պոսար:

Ու երկու մանուկները կը փախչէին դէպ ի անտառը, ուր աներեւոյթ եղան:

Բ.

Քիչ յետոյ նաւակն ու գետը անհետացան իրենց աչքերէն: Տակաւին քիչ մը ատեն վազեցին: Ետոյ Քրիստոնէ ինկաւ ու սկսաւ լալ: Ի՞նչ զանի վերցնելով:

— Եկուր, ըսաւ, մեր տունը հունա՛ է:

Բայց կը խաբուէր. այն կողմը տուն չկար: Կը քաշէին ու կը քաշէին: Զորցած տերեւներն ու մեռած ոստեր ոտքերնուն տակ կը ճարճատէին:

Յանկարծ մարդու ձայներ լսեցին ու կանգ առին ականջ դնելու համար . բայց նայն պահուն արծիւի սոսկալի աղաղակ մը թնդաց որ զիրենք դողացուց ահաբեկ : Ու սկսան նորէն փախչիլ :

Հագիւ քսան քայլ առած էին եւ ահա նշմարեցին մորենիի ծառատունկեր : Այնքան շատ էին անոնք որ մանուկները սքանչացած մնացին : Շատ աղուոր ու շատ ակորժարեր էին : Ինչպէս կրնային դիմանալ եւ զանոնք քաղելու համար չուշանալ :

Անմիջապէս մոռցան քաշած վարներին , եւ սկսան իրենց գործին նայիլ . մէկ կողմէն կը ժողվէին , մէկ կողմէն ալ մեծ ակորժով կ'ուտէին , այնպէս որ բերաններն , երեսներն ու ձեռքերնին կաս կարմիր ու կաս կապոյտ եղան :

Այս միջոցին նոր աղաղակներ ականջնուն հասան :

— Չըլլայ որ խոճկորը ջուրին մէջ ձգելուիս տեսած ըլլան ու մեզի ծեծելու գան , ըսաւ Քրիստինէ , որ բոլոր մարմնովը կը դողար :

— Հայրիկին քով փախչինք , պատասխանեց Իվօ : Մեր տունը այս կողմն է անտառին մէջ :

Ու սկսան նորէն քալել : Քիչ ատենէն ներուզիի մը ծայրը հասան . բայց այս անգամ ալ մտրած էին . այդ ճամբան եէր եէնսի տունը չէր տաներ :

Կամաց կամաց գիշերը վրայ կը հասնէր ու մութը կը կոխէր : Պզտիկները կը սոսկային . պաղ քրտինք մը կը կաթէր իրենց ճակտէն . խոր լռութիւն կը տիրէր ամէն կողմ : Բուր մը կամ ուրիշ գիշերային թռչունի մը ձայնը միայն կը լսուէր ատեն ատեն :

Իվօ եւ Քրիստինէ շատ յոգնած էին : Իրենց ձեռքերը ճեղքատուած էին այն փշոտ մացառներէն՝ զորս մէկիդ ընելու ստիպուած էին ճամբայ բանալու համար . եւ սակայն բնաւ ընթացքներն չէին կորսեցներ :

— Հունա՛ , կ'ըսէր մերթ Իվօ ինքնավրտահալութեամբ :

— Չէ՛ , կը պատասխանէր պահ մը յետոյ Քրիստինէ յուսահատ :

Վերջապէս անտառ մը մտան ուր իրաւցնէ կորսուեցան ալ :

Այն ատեն Իվօ չկրցաւ արցունքը զսպել . ու Քրիստինէ ալ սկսաւ հեծկլտալ :

Խաւարը հիմա զիրենք կը պատէր բոլորովին : Այնքան մութ էր որ իրարու ձեռքէ բռնած՝ կծկուած մնացին : Իրենց խեղճ պղտիկ սիրտերը շատ ուժգին կը տրոփէին . ի՞նչ պիտի ըլլային . ի զուր կուլային , կը հեծէին . մա՛րդ չէր լսեր իրենց ձայնը , մա՛րդ չէր գար անոնց օգնութեան :

Ժամ մը , երկու ժամ անցան այսպէս : Մամուպատ ժայրի մը վրայ կ'քած ու չորացած տերեւներուն վրայ տարածուած էին զիրար գրկած , իբր թէ վստահ եղած ըլլային որ այս կերպով զերծ պիտի ըլլային վտանգէ : Այսպէս քնացան այն տեղ :

Գ.

Արեւը բարձրացած էր արդէն երբ արթնցան : Կարծես փայտ կտրած էին , Իվօ իր բոլոր քաջութիւնը վերստացաւ սակայն . մատովը ցոյց տուաւ բլուրը՝ ծառերով ծածկուած՝ որոնց մէջէն լուսեղէն ճառագայթները նուրբ ոսկեգոյն գոլորչի մը կը մաղէին :

— Մինչեւ հոն երթանք , ըսաւ ինքնավստահ , պիտի կրնանք հոն տաքնալ ու տունը պիտի գտնենք :

Աւա՛ղ , չէր գիտեր թէ ինք շատ հեռու էր անկէ , անտառին բոլորովին ուրիշ մէկ մասին մէջ :

Խիզախ ու եռանդոտ՝ հետը առաւ պղտիկ Քրիստինէն : Ու երկուքն ալ սկսան օտքով ձեռքով մագցելով վեր ելլել :

Կամաց կամաց զագաթը հասան ու հոն ապշած մնացին աչքերնին մեծ մեծ բանալով :

Իրենց անջեւ , օտքերնուն տակ , կը տարածուէր գեղեցիկ լճակ մը , որուն կանանչ ու թափանցիկ ջուրը հայեիլի մը պայծառութիւնը ունէր : Անհամար ձուկեր կը խաղային հոն արեւուն մէջ , ջուրին երեսին վրայ լողալով ու զիրար հալածելով : Տեսարան մըն էր այս որ մտքերնուն չէր անցներ : Երկուքն ալ սիւրճան ծափ զարնել՝ չկրնալով զսպել իրենց հրճուանքը :

Յանկարծ Իվօ ուրախութեան աղաղակ մը արձակեց : Գլուխը ետին դարձուցած ատեն , իրենցմէ քանի մը քայլ անդին՝ մեծաշուք

կաղնի մը տեսած էր, կաղիններով ծանրաբեռնուած: Իսկոյն վաղեցին դէպի հոն, սկսան քաղել ուրախ գութարթ, այնքան երջանիկ էին. եւ իրենց ճերմակ ու փափուկ պզտիկ տիւաներով կը կտորտէին ասորժահամ պլտուղները որոնց պատեանը դեռ չատ կախուղ էր:

Բայց ահա յանկարծ նոր սարսափ մը զիրենք պատեց: Իրենց քովը կանգնած տեսան հողին տակէն ելածի պէս՝ պառաւ կին մը, բարձրահասակ թխադէմ, սեւ ու փայլուն մազերով: Իր դէմքին մութ գոյնին վրայ աչքի կը զարնէր աչքերուն ճերմակը: Խափշիկ մըն էր կարծես: Կանակը բակեղէթ մը ունէր ու ձեռքը խոշոր վարակոտ գաւազան մը, գրեթէ իրեն չափ բարձր:

Գնչուհի մըն էր:

Կինը մօտեցաւ իրենց ու սկսաւ խօսիլ. բայց անոնք այնքան սարսափած էին որ ըսածը չէին հասկնար:

Գնչուհին մարդասէր չարժուածքով մը զանոնք ապահովցնելէ յետոյ ցոյց տուաւ անոնց երեք խոշոր ընկոյզներ, զորս իրարու ետեւէ գրպանէն հանեց:

— Ասոնք մոգական ընկոյզներ են, ըսաւ, զորս ունեցողը անպատճառ երջանիկ կ'ըլլայ:

Իվօ երկար ատեն զիտեց գնչուհին, աչքերն անոր երեսէն չզատելով: Այս կնոջ առաջ ու բարի կերպարանքը զինքը հանդարտեցուց. քաջութեամբ անոր քովը գնաց ու հարցուց թէ կուզէ՞ր իրեն տալ այն ընկոյզները՝ զորս իր կեանքին մէջ տեսածներէն աւելի աղուոր եւ աւելի հետաքրքրաշարժ կը գտնէր:

Գնչուհին յօժարակամ անոր ընծայ տուաւ այդ գանձը, որուն փոխարէն Իվօ եւ Քրիստինէ կաղնին փետտեցին ու պառաւին գլորպանները կաղնիով լեցուցին:

Յետոյ գացին նստան, վասն զի յոգնած էին, եւ աչքերնին խոշոր խոշոր բացած մօգական ընկոյզները կը գիտէին:

— Ասոնց մէջ պիտի գտնէք, ըսաւ կինը, ինչ որ կայ աշխարհի մէջ ամենէն ցեղեցիկ:

Իվօ իր ձեռքին մէջ կը դարձնէր ընկոյզներէն մէկը ու ամէն կողմէ կը զննէր զայն մեծ ուշադրութեամբ:

— Ասոր մէջ, ըսաւ, կ'ուզէի որ կառք մը եւ ձիեր ըլլային:

— Բաղձանքդ կատարուած է, յարեց գնչուհին: Այդ ընկոյզը կը պարունակէ արգարեւ չքեղ կառք մը, ոսկեզօծ ասպաղէնով ձիերէ լծուած: Զանոնք պիտի գտնես ատոր մէջ, բանալուդ պէս:

— Ախ, ինձի՛ տուր ատիկա, յարեց Քրիստինէ:

Իվօ փութաց կատարել իր պզտիկ բարեկամուհիին փափաքը եւ Քրիստինէ զգուշութեամբ պահեց ընկոյզն իր ձեռքին մէջ, մինչ կինը զինքը կը գիտէր ժպտելով:

— Հապա ա՛ս, ըսաւ Իվօ: Քրիստինէի վզին թաշկինակին չափ սիրուն թաշկինակ մը կա՛յ. արդեօք ասոր մէջ:

— Ոչ թէ մէկ, այլ տասը հատ կայ, պատասխանեց կինը. ինչպէս նաեւ գեղեցիկ շրջագետներ, գուլպաներ, գլխարկ մը...

— Ոհ, ատիկա ի՛մա ըլլար, գոչեց Քրիստինէ:

— Ա՛ս աս ալ քեզի, ըսաւ Իվօ, չափազանց գոհ՝ այս կրկին հաճոյքը անոր պատճառել կարենալուն համար:

Կը մնար երրորդը որ շատ պզտիկ ու շատ սեւ էր:

— Ատ ալ թո՛ղ քուզդ ըլլայ, յարեց Քրիստինէ: Պէտք է որ հատ մըն ալ դուն ունենաս, եւ ատ ալ իմիներուս չափ աղուոր է:

— Ասոր մէջ ի՛նչ կայ, հարցուց Իվօ, աչքերը յառած գնչուհիին աչքերուն:

— Ինչ որ աշխարհս կրնայ ունենալ քեզի համար ամենէն լաւ, պատասխանեց կինը:

Իվօ ձեռքին մէջ պահեց իր սեւ ընկոյզը:

Գնչուհին խոստացաւ զիրենք ուղիղ ճամբուն վրայ դնել. յետոյ ա՛յ ձեռքը տուաւ Իվօին, ձախն ալ Քրիստինէին. ու սկսան հետեւիլ այն նրբուղիին ուրիշ եկած էին: Այն ասան տեսան որ միշտ իրենց ետեւը ձգած էին մուճակագործին տունը:

Պահ մը Իվօ վախցած էր որ գնչուհին չելէր գողնար զիրենք: Այս տեսակ թափառական կիներու կողմէ իրենց ծնողքէն գողցուած տղոց պատմութիւններ լսած էր շատ անգամ, բայց չէր գիտեր թէ ինչո՛ւ աս ալ միեւնոյն երկիւղը չէր աղբեր իրեն:

Ճամբան՝ նրբուղիին մէջտեղը՝ հանդիպեցան անտառապահին որ ի վօն ճանչցաւ : Անոր շնորհիւ , մանուկները որոնք իրենց բնակարանը ճշդիւ չէին կրցած ցոյց տալ զնշուհիին , ողջ առողջ հասան մուճակագործին տունը :

Եէք Եէնա ու նաւավարը անձկանօք կըստապէին : Ներուեցաւ իրենց ու աղէկ աղատեցան , վասն զի երկուքն ալ իրենց անհնազանդութեան համար խարաղանուելու արժանի էին : Սաստիկ յանդիմանութիւն մը միայն լսեցին խոճկորը ջուրը ձգած ըլլալուն եւ մանաւանդ անտառը փախած ըլլալուն համար :

Արցունքները սրբէլէն յետոյ՝ նաւավարը Քրիստինէին հետ իր տունը գնաց , իսկ ի վօ մուճակաւաճառին պզտիկ խրճիթին մէջ մնաց : Այն իրիկունը մինակ մնալուն պէս առաջին գործը եղաւ կամոց մը գրպանէն հանել այն սեւ ընկոյզը որ, գնչուհիին ըսածին նայելով , կը պարտենակէր ինչ որ կար աշխարհի մէջ ւաղոյն իրեն համար :

Ոտքերուն ծայրին վրայ կոխելով՝ զգուշութեամբ գնաց դրաւ գոյն կիտարաց դրան ու սեմին մէջտեղ , յետոյ յանկարծ գուռը գոցեց :

Գուռը , կոտորեցաւ ընկոյզը : Բայց որքան մեծ եղաւ պզտիկ ի վօին յոռախարութիւնը , երբ ընկոյզի տեղ գտաւ քթախոտի նման սեւ փոշի մը : Որդ մը կերած էր պտուղը :

— Ասիկա մտածելու էի , ըսաւ ի վօ ինքնիրեն : Ինչպէս կրցայ այնքան տխուր ըլլալ հաւատալու համար թէ այս շատ պզտիկ ընկոյզին մէջ աշխարհի էն աղուոր բաները կըրնային սղմիլ : Քրիստինէն ալ ինծի չտի խաբուած պիտի ըլլայ : Երթան բարով իր գեղեցիկ չրջագգեստներն ու ոսկեզօծ կառքը : Պէտք չէ՞ որ յիշի այն խրատը զոր հայրիկը խիստ շատ անգամ կուտայ ինծի . « ի վօ , մի՛ մոռնար բնաւ որ կեանքի մէջ մարդ իր երջանկութիւնը իր աշխատութեանը մէջ փնտռելու է եւ ոչ թէ բաղդին » :

(Շարունակութիւնը յաջորդով)

Հարսանեկան հանդէս . — Երկուշաբթի օրը , Պէլիթաշի եկեղեցիին մէջ կատարուեցաւ Տատեալ Թորթաշի և Տատեալ Թորթաշի օրը : Օրը Թորթաշի և Տատեալ Թորթաշի հետ , Տ. Վահրամ Մանուկի եղբորդոսի նախագահութեամբ , եւ այն ու արարագգի բազմութիւն հրաւիրեցին իրենց խորհրդարանին կնքահայրութիւնը : Զայեան ի դիմաց Բարձր Բարձր Վարդապետի փառայի որ անձնական տկարութեան պատճառով չէր կրցած ներկայ գտնուիլ իր եղբորորդոսին պսակին :

ԴԱԻԻԹ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ՈՐԲԵՐԸ

Մանչէսթըրէն՝ Գառնիկի էֆ. Ֆնտգրեան խորագրութեանս զրկած է մէկ անգլ. ոսկի՝ ողբացեալ ուսուցիչ Դաիթ Սարգիսեանի այրիին ու որբերուն ի նպաստ : Յանձնեցինք Տիկին Մարիամ Սարգիսեանի :

«ՄԱՍԻՍ» ԵՒ ՆԱՄԱԿԱՏՈՒՓԸ

Վ. Պ. (Այնթապ) — Բաժանորդագրութեան պայմանները կրնաք իմանալ Մասիսէն զոր սկսանք զրկել , ձեր յանձնարարութեան համաձայն :

Մ. Թ. (Աստաքստ) — Շատ երկար է : Հրատարակութիւնը առ. այժմ բնեք խօստանար , թերեւս յառաջիկային :

Շ. Շ. (Բաղէշ) — Ուսանաւորնիդ անյաջող է պարգապէս , և ձեր բաժանորդ եղած ըլլալը արժանիք մը չաւելցնէր անոր վրայ :

ԳՈՐԾԱԿԱՆ. (Աստաք) — Մեզի համար լաւագոյն և ձեզի համար նուազ յոգնեցուցիչ պիտի ըլլար՝ ամբողջ բաժնեգինները մէկ անգամէն զրկել , մանաւանդ որ Մասիս իր եօթներորդ ամիսը կը թեւակոխէ :

ԱՐՏՈՆԱՏԵՐ Կ. Ս. ԻԿԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՆՈՍԵԱՆ

Կ. Պոլիս , Ֆինանսներու եօթուշու , Թիւ 27

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՉԱԿ

Վարժարանիս առաջիկայ տարեթիվը կը սկսի սեպտեմբեր 4ին (Ը. Ե.) Երեւոյի քաղաքի առաջին շարժարանին եւ տասնութեան (16) Օսմ. ոսկի. 8 ոսկին Սեպտեմբերի եւ միւս 8 ոսկին Փետրվարի սկիզբը վճարելի :

Տնօրէնութիւնը ամէն շաբաթ եւ խնամք կը ցուցնէ իր սանի վարժարանս ամէն կերպով գոհացուցիչ եւ բարեկարգ վիճակի մէջ պահելու համար :

Արդէն իսկ գտնուած կարող ուսուցիչներու ծանօթ խումբին վրայ աւելցուած է Մինաս Է. Ծալեան : Մանուկ Է. Թ. Բաղդասարեան եւս պիտի ստանձնէ գեղագրութեան ու գծագրութեան դասերը , իբրեւ մասնագէտ ստուգիչ այդ ճիւղերուն :

Տիկին Զեմալբաշեան ամսամբ պիտի հսկէ մասնաւորաբար փոքրիկներուն վրայ : Բոլոր աշակերտներն արդէն կը գտնուին վարժարանին բոլորակից անմիջական հսկողութեան տակ :

Նոր աշակերտներու արձանագրութեան համար ծնողները կամ խնամակալները կը հրաւիրուին անյապաղ դիմել վարժարանին Տնօրէն Տր. Զեմալբաշե (Պարտիզակ) որմէ կարելի է ստանալ պէտք եղած ամէն տեղեկութիւն , եւ կամ Մր. Փիքի , Պալպուլ-Հաւուզ , Կ. Պոլիս :

5-10

“ԱԼԼԷԱՆՁԱ.”

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (ՃԵՆՈՎԱ)

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳՈՒՄԱՐ 87,455,645

Ընկերութիւնը կը կնքէ կեանքի ապահովագրութիւններ խառն , եւ որոշ պայմանաւորութեամբ , օժտի , ցկեանս կամ ժամանակաւոր եկամուտներու , հետեւեալ առաւելութիւնները ընծայելով .

Մէկ տարուան ապահովագրութեան հարցը , երբեք ապահովագրիչները (քոլիս) չեն ջնջուիր , մենամարտն ու անձնապահութիւնը կ'երաշխաւորուին , բնաւ ո եւ է արհեստի կամ ուղեւորութեան համար յաւելուածական ապահովագրիչ (քոլիս) չի պահանջուիր , ապահովագրիչներու վճարումը դադարելու պարագային՝ ապահովագրիչը կը գնուի ըստ նշանակեալ արժէքին , ապահովագրի ծախք չաւուրի , ընկերութեան շահերուն կը մասնակցի ապահովագրութեան :

Արիւմտեղծութեան դէմ ապահովագրութիւն մասնաւոր կամ աշխատելու անկարողութեան պարագային ժամանակաւոր անկարողութեան համար օրական վճարում կ'ըլլայ :

Երաշխաւորութիւններ՝ հեծանիւի , ձիու , կառքի , թրամուէրի , քրկաթուղիի , շողեանի , առաքատ սնունդի , միջատներու խայթուածքի եւ ապահովագրութեան արհեստին մէջ կամ անկէ դուրս պատահելիք ուրիշ ո եւ է արկածի դէմ :

Ընկերութիւնը կ'ապահովագրէ օրինաւոր անձնապաշտպանութիւնը , ինչպէս նաեւ մարդ մը կամ ինչք մը ազատելու առթիւ պատահած ո եւ է արկած :

Ընկերութեան պահքան է՝ ԲՐԷՏԻ ԼԻՈՆԷ

Ընդհանուր գործակաւար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս , Հաճորուլօ խան , թիւ 53, 54, 55, 56

ԻՍԹԸՐԵՆ ԳԱՌԻՆԹԻՍ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ (Ի ՀԸԼԼ)

Նպաստաւոր պայմաններով կ'ապահովագրուին ամէն տեսակ շէնք , կարասի , ապրանք

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 7,250,000 ՖՐԱՆԿ

Ընդհանուր գործակաւար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս , Հաճորուլօ խան , թիւ 53, 54, 55, 56

Ընկերութեան գրամատուեն է՝ ԲՐԷՏԻ ԼԻՈՆԷ

Ի Ի Ն Ի Օ Ն

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած 1828—1829 ին



ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂԻՆ
97 Միլիոն
ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՅ ՃԻՒՂԻՆ
137 Միլիոն

Ընկերութեան գրամատուռն է
ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Պուլկարիոյ Տնօրէն

Սիւնոն Էֆ. Բալսեղեան

Կենաց ճիւղին տեսուչ

Միհրան Էֆ. Տէր Ներսիսեան

Կ. Պոլիս, Կալաթա, Թահապուրուն խան
Օսմ. Պանքայի գէմ :



Ուսողութիւն գործարանի մարտային

Ն Ի Ո Ւ Հ Ո Մ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵԱՆ

Որ կը մըցի միւս բոլոր կարի մեքենաներուն հետ

ՊԱՐԶՈՒԹԵԱՄԲ

ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՄԲ

ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ

ԹԵԹԵՐՈՒԹԵԱՄԲ


ԱՃԱՆՈՒԹԵԱՄԲ

Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ

ՈՐԴԻՔ ՅՈՎՀ. Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կերօնմատակարար, Պոլիս, Պաշէ-Բաբու, Համիտիէ հատակէ, Թիւ 7

Գնողներու համար վճարման եւ ամեն տեսակի դիւրութիւններ



THE GRESHAM

Կ Ր Է Շ Ա Մ

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ
ՀԻՄՆՈՒԱԾ Ի ԼՈՆՏՈՆ**

1848 ին

Դրամագլուխ եւ երաւաւորութեան գումար աւելի քան 175,000,000 Ժրամ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՔ ԷՏՈՒԸՐՏՍ ԵՒ ՈՐԴԻ

Ալալըմնի խան, Մէյսանըզ փողոց, Կ. Պոլիս :